

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՂԵՐՍՆԵՐԸ ՊԱՐՍԻՑ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Ինչպես հայտնի է, Ավ. Իսահակյանը հաճախ է առնչվել պարսկական միջնադարյան գրականությանը և բանահյուսությանը՝ ստեղծագործական ազդակներ ստանալով բանավոր և գրավոր այդ հարուստ գրականությունից:

Մասնավորապես Ավ. Իսահակյանի՝ պարսկերենից կատարած թարգմանությունների կապակցությամբ հայ գրականագիտության մեջ խոսվել է պարսից մեծ քնարերգու Հաֆեզի երեք բանաստեղծությունների վերաբերյալ՝ «Գինին՝ ձեռքիս, վարդը՝ կրծքիս...», «Լուսադեմին վարդ քաղելու...» և «Ո՛վ առավոտ, իմ նազելուց...» սկսվածքներով: Ավ. Իսահակյանի երկերի ժողովածուի 2-րդ հատորի ծանոթագրությունների բաժնում անվանի իսահակյանագետ Ա. Ինժիկյանը այս առիթով մեջբերել է բանաստեղծի վկայությունը, ըստ որի՝ նրա հետաքրքրությունը պարսից մշակույթի և պոեզիայի նկատմամբ սկսվել է դեռևս 1892 թվականից, երբ նա պարսկերենի դասեր է ստացել մի պարսիկ բեյից և թարգմանել է Հաֆեզի մի քանի բանաստեղծություն՝ առանց նույնիսկ ծանոթ լինելու պարսիկ հեղինակին կամ նրա ստեղծագործությունների թարգմանչին¹:

Պարզվում է, սակայն, որ պատանի Իսահակյանը, չբավարարվելով մեկ ուսուցչից ստացած գիտելիքներով, դիմել է նաև Շիրակի մարզում գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվող պարսկական ծագումով թաթերին, որոնք, ըստ գրականագետ Ա.Մուշեղյանի, «բառ-բառ թարգմանում են գրուցասեր պատանուն Հաֆիզի գինեվետ երգերը, և 18-ամյա բանաստեղծը դրա հիման վրա իր հանգ ու ոճով վերստեղծում է հայերեն գողտրիկ ուսանավորներ և 1893 թ. օգոստոսի 15-ին «Տարագուն» տպագրում «Պարսկական մոտիվներ, հատվածներ Հաֆիզից» վերնագրով²:

Վերը հիշատակված երկու բանաստեղծություններում («Լուսադեմին վարդ քաղելու...» և «Գինին՝ ձեռքիս, վարդը՝ կրծքիս...») առկա են Արևելքի շունչը, կենսափիլիսոփայությունը և, վերջապես, այն երեք հիմնասյուները՝ գինի, վարդ ու տխրակ և սիրած կին, որոնց վրա հիմնականում խարսխված է պարսից միջնադարյան քնարերգությունը:

Մինչդեռ «Ո՛վ առավոտ, իմ նազելուց...» սկզբնատողով բանաստեղծությունը, ինչպես իրավացիորեն նշել են գրականագետներ Ա.Ինժիկյանը³, Ա.Մուշեղյանը⁴ և Ավ. Իսահակյանը⁵, ժողովածուից ժողովածու մշակվել է ու բյուրեղացել՝ հետագայում ներառվելով բանաստեղծի գրական ժառանգու-

յան մեջ որպես ինքնուրույն բանաստեղծություն՝ «Քնքուն իովիկ, իմ նազելուց...» սկզբնատողով: Հավելենք, որ այս բանաստեղծության նախնական տարբերակի ինքնագրի⁶ լուսանցքում Իսահակյանը շեղակի նշել է. «Նայել Հաֆիզը», այնուհետև ջնջել է գրածը և վերևում ավելացրել. «Նայեցի», ինչը վկայում է այն մասին, որ պատանի բանաստեղծը, իր ստեղծագործությունների նկատմամբ ցուցաբերելով լուրջ ու համակողմանի մոտեցում, ամենայն հավանականությամբ դիմել է պարսից լեզվի և քնարերգության գիտակաների կամ տողացի թարգմանությունների (ինարավոր է՝ նրան օգնել է նաև իր պապը՝ պարսկերենին և պարսից բանահյուսությանը քաջատեղյակ Նիկողայոս աղան⁷) և հյուսել է որակապես նոր ու գողտրիկ մի գործ: Այն, հիրավի, կրում է Իսահակյանի գեղարվեստական անհատականության կնիքը, և միայն մեկ պատկեր է հիշեցնում նրա պարսկական հիմք ունենալը:

Մեկ անգամ ևս ընթերցենք այս բանաստեղծությունը.

*Քնքուն իովիկ, իմ նազելուց
Քաղցր բուրմունք հետըդ բեր,
Վիշտ ու ցավըս շուտ փարատիր,
Սիրո բարև հետըդ բեր:
-Շո՛ւտ, մատռվակ, ոսկի թասով,
Վարդի գույնով գինի բեր:*

*Անուշ խոսքեր սիրուս սրտի
Պարտեզներից քաղիր, բեր.
Ջերմ համբույրի, ծով-կարոտի
Ծաղիկ-բուրմունք հետըդ բեր:
-Շո՛ւտ, մատռվակ, ոսկի թասով,
Նռան փայլով գինի՛ բեր...*

Ինչպես նկատում ենք, յուրաքանչյուր բանաստեղծական տան 5-6-րդ տողերն արտահայտում են պարսկական սիրերգության հիմնական խորհրդանիշներից մեկը՝ գինին՝ որպես կյանքի վայելքի և երջանիկ արբեցման միջոց: Նկատենք, որ եթե բանաստեղծության նախնական մշակման մեջ *գինի* գոյականը երկու դեպքում էլ ունի մեկ մակդիր՝ *վարդի գույնով*, ապա վերջնական տարբերակում այն ստացել է տարբեր մակդիրներ՝ *վարդի գույնով* և *նռան փայլով*, որ ավելի քնարական, արտահայտիչ և ռիթմիկ է դարձրել պատկերը:

Ավ. Իսահակյանի անտիպ ժառանգությունը քննելիս հանդիպում ենք բանաստեղծությունների, որոնք չունեն որևէ նշում կամ տվյալ դրանց թարգմանություն լինելու վերաբերյալ, բայց որոնցից հատնում է Արևելքը՝ իր ոճով, ընդհանուր տրամադրությամբ ու սիմվոլիկայով:

Այսպես.

*Կարմիր վարդը թո՛ղ ու թո՛հր, այ բլբուլ,
էշխի ձեռքը շրճյարս խոց է դառել -
Հերիք երգես, հերիք կանչես, այ բյուլբյուլ,
Մեջիս մարմանդ կրակը բոց է դառել:*

*Վարդի նման յարս գնաց, ի՞նչ անեմ,
Յարս գնաց, յարես մնաց, ի՞նչ անեմ,
Աղ է երգդ՝ վերքիս ցանած, ի՞նչ անեմ,
Բյուլբյուլ, սիրտս ցավերի ծոց է դառել:*

*Քո վարդի հետ քեզ տեսնելիս միասին
ես ո՞նց չլամ իմ յարի ու իմ մասին.
Բյուլբյուլ, թո՛հր, թե չէ ես էլ իմ հարսին
Տաղ կկանչեմ.- իմ տաղը կոճ է դառել²:*

Կամ՝

*Դայլայլում է սոխակն անուշ.
Հարցնում եմ.- «Ասա՛, սիրուն,
Այս ե՛րբ եկավ գարունն անուշ,
Թե՞ երագիս մեջն է գարուն³»:*

*Պիտի հարբեմ, հարբեմ անհագ.
Գինու մեջն է սեր ու գարուն⁴:*

Արանցից տարբերվում է հետևյալ բանաստեղծական փորձը, որն ավելի շուտ արձակ շարադրանք է.

*Իմ նազելուս գրկում
Խմում եմ գինի:*

*Շրթունքը՝ բերնիս,
Գինին՝ ձեռքիս,
Սլացիկ մակույկի մեջ,
Սիրուն աղջիկը կրծքիս*

*Ես կզգամ ինձ հավասար
Աստվածների հույլին մեջ¹⁰:*

Սա կարելի է համարել արձագանքը կամ, թերևս, նախնական մշակումը «Գինի՞մ՝ ձեռքիս, վարդը՝ կրծքիս...» բանաստեղծության, որն ինքը՝ Իսահակյանը, դասել է իր կատարած թարգմանությունների շարքին.

*Գինի՞մ՝ ձեռքիս, վարդը՝ կրծքիս,
Անուշ սերըս սրտովըս.
Չին՞մաչի՞նի թագավորը
Խեղձ աղքատ է աչքումըս.
<Իմիկուց դեն պիտի պաշտեն
Վարդն ու աղջիկն ու գինին...¹¹:*

Ավ. Իսահակյանի արխիվում պահպանվում է նաև երկու բանաստեղծություն՝ «Պարսկական» վերնագրով, գրված, հավանաբար, նույն՝ 1892-1893 թթ.: Թարգմանական այս փորձերում արտացոլված են պարսից բանաստեղծության պատկերավորման սկզբունքները, յուրահատուկ արտահայտչականությունը և գեղագիտական մտածողությունը: Առաջին գործն արտահայտում է սիրահար երիտասարդի երանավետ հոգեվիճակը և սուր զգացումներ ունենալու ձգտումը՝ հավաստելու իր անձնուրաց սերը: Այն գրված է պարսից միջնադարյան քնարերգության մեջ լայնորեն կիրառվող բեյթի ձևով.

*Ես քեզ հետ դիտմամբ կռվել եմ ուզում՝ ի սեր հաշտության,
Որպեսզի գուցե գործը համբույրով ըստանա վախճան¹²:*

Երկրորդ բանաստեղծության դեպքում Իսահակյանն օգտագործել է պարսկական ժողովրդական քառյակի ձևը՝ հեռանալով դասական քառյակի (ռոբայի) կառույցից, քանի որ այն չի համապատասխանում վերջինիս հանգավորման և պոետիկայի կանոններին: Այստեղ պատկերված է սիրած էակին անմնացորդ նվիրված սիրահարի անզոր հանդիմանանքը և ամեն ինչ ներելու նրա պատրաստականությունը.

*Չեմ սպասում, որ երբեք
Խոստումդ անես ի կատար.
Բերկրանքը սուտ խոստումիդ
Բավ է արդեն ինձ համար¹³:*

Այս բանաստեղծության քննարակյալ հերոսի հոգեկան ապրումները համահունչ են նաև իր՝ պատանի Իսահակյանի զգացումներին. նա ևս պատրաստ է ամեն ինչի՝ հանուն փոխադարձ սիրո.

*Ինչ որ ցանկաս՝ կուզեն լինիմ,
Լինիմ երկինք ու երկիր,
Լինիմ ծով, ժայռ, արև, լուսին,
Միայն, միայն ինձ սիրիր...¹⁴:*

Գ. Գեմիրձյանը, որ Գևորգյան ծննդարանում եղել է Ավ. Իսահակյանի դասընկերը, «Տարազ» հանդեսում տպագրած նրա վերոբերյալ երեք բանաստեղծությունների առիթով հետազայում գրել է. «Արևելքն զգացվում էր իր բոլոր երանգներով ու հնչյուններով¹⁵: ...Չէ՛, Արևելք էր նա,- շարունակում է Գեմիրձյանը,- իսկական Արևելք: Ես նայում էի <Աֆիզի կողմը՝ դեպի Իրան, և նրան տեսնում այդ բանաստեղծի կողքին»¹⁶...

Ծանոթագրություններ

1. Տե՛ս Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 2, եր., 1974, էջ 323:
2. Ա.Մուշեղյան, Ավետիք Իսահակյանի պատանեկան բանաստեղծությունները, «Սովետական գրականություն», եր., 1980, թիվ 6, էջ 120:
3. Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու հ. 2, էջ 323-324:
4. Ա.Մուշեղյան, Ավետիք Իսահակյանի պատանեկան բանաստեղծությունները, «Սովետական գրականություն», 1980, թիվ 6, էջ 120:
5. Ավետիք Իսահակյան, Երկերի լիակատար ժողովածու, հ.1, եր., 2003, էջ 677, Ավ. Իսահակյան, «Բարև, Վարպետ», եր., 2008, էջ 348-349:
6. Ե.Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Ավ.Իսահակյանի արխիվ (այսուհետև՝ ԱԻՖ), 2-III, 90:
7. Տե՛ս Ավ. Իսահակյան, «Բարև, Վարպետ», էջ 333:
8. ԳԱԹ, ԱԻՖ, 157-II:
9. Նույն տեղում, 154-II:
10. Նույն տեղում:
11. Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու, հ.2, էջ 276:
12. ԳԱԹ, ԱԻՖ, 3-II, 41:
13. Նույն տեղում, 3-II, 43:
14. Տե՛ս «Կուզեն լինիմ վշտի ցողեր...» բանաստեղծությունը՝ գրված 1892 թ. (Ավետիք Իսահակյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, էջ 78):
15. Գ.Գեմիրձյան, Երկերի ժողովածու, հ. 14, եր., 1987, էջ 272:
16. Նույն տեղում, էջ 273: